ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ **«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ~~ԼՐԱՑՈՒՄՆԵՐ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1.

«Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի N ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի

- 4-րդ մասը շարադրել ~~վերաշարադրել~~ հետեւյալ ~~շարադասությամբ~~ խմբագրությամբ՝. «4. Հեռարձակողները, որոնք եթեր են հեռարձակում ~~արտադրում են~~ նաև մանկական, ~~և (~~կամ~~)~~ լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր.~~,~~ պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության~~ական~~ խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ~~ընկալման~~ մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ ~~կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին,~~ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, և լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազույն պահանջներին համապատասխան:»:
- 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետեւյալ շարադասությամբ.՝ «Ժեստերի լեզվով թարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջները եւ հեռարձակման ժամերը:»:

Հոդված 2.

Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ նախադասությամբ. «7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ~~հետապնդում են~~ ազգային, ռասայական, սեռային~~,~~ ~~և~~ կրոնական, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն ~~քարոզելու նպատակ~~ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:»:

Հոդված 3.

Օրենքի 22-րդ հոդվածի

- 6-րդ մասի 3-րդ կետի գ. ենթակետը շարադրել հետեւյալ շարադասությամբ.՝ «գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, ռասայական, կրոնական~~,~~ ~~և~~ սեռային, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը»:

- 6-րդ մասը լրացնել նոր կետով հետեւյալ բովանդակությամբ.՝ 4) ապահովել հայերեն ենթագրերով ~~և (կամ)~~ ժեստերի լեզվի թարգմանությամբ՝

ա. շաբաթվա ընթացքում առնվազն մեկական կրթական, առողջապահական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդման հեռարձակում,

բ. Հայաստանի Հանրապետության տոներին և հիշատակի օրերին կազմակերպվող միջոցառումների ուղիղ եթերով հեռարձակումները,

գ. վարչապետի, ~~ԱԺ~~ Ազգային ժողովի նախագահի, Հանրապետության նախագահի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները և նախապես ծրագրված հարցազրույցները,

դ. արտակարգ և ռազմական դրության ռեժիմի ընթացքում եթեր հեռարձակվող հատուկ թողարկումները,

ե. սոցիալական գովազդը»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:

~~2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի գ եւ դ կետերը ուժի մեջ են մտնում 2022 թվականի դեկտեմբերի 1-ին:~~